

## ՀԻ՞Ն Է ԶԵԿԵՐ

### ՔԱՐՈԶ Ի ՄԿՐՏՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ

Յաւէրժական ծայնիւ յոգնակի գոչմամբ գեղապարեալ պատուեմբ ըզսոսկալի եւ ըզսարսափելի գալուստն ի քում յորովայնիդ սուրբ Աստուածածին Մարիամ, նառեմբ զանճառելի ըզծընունդն, քանզի որ էնն ի ծոց Հաւը հայրենի ծնունդ եւ հայրածին մանուկ, որդի անդրանիկ եւ անժամանակ տղայ, յառաջ քան ըզյաւիտեանս, Աստուած հանեցաւ մարմնանալ ի քում յորովայնիդ սուրբ Աստուածածին Մարիամ, որ այսաւը ի քէն մարմնացաւ մեզ Աստուած երեւեցաւ. ըզնա անդադար աղաչեա վասն անձանց մերոց, աղաչեմբ :

Անպատմին կառք, անդրդուելի աշտարակ, անպարտելի պարիսպ, աղբեր լուսոյ ականակիտ վտակ, գետ յորդահոս եւ յորդավըտակ, քանզի Հայր Աստուած հինաւուրցն ի հայրաշարժ յաղբերէն առու կարկաչս առնելով անծըլեւածեւ ցաւզանայր ի քում յորովայնիդ սուրբ Աստուածածին Մարիամ, որ այսաւը ի քէն մարմնացաւ . . . :

Կենդանաստեղծին մայր, կենարարին պատճառ, կուսածին առագաստ, կանգնումն Աղամայ եւ կեանք եւայի, պիրճութիւն պտղոյն եւ մերժիչ խաւարի, մեղաց լուծիչ եւ մարդկան քաւարան սուրբ Աստուածածին Մարիամ, որ այսաւը [ի քէն] մարմնացաւ . . . :

Ոսկետուփ տումար, դիւրայարմար, ասրափայլ անծրեւ եւ լեառն վիմածին, գանծ շարաշարեալ եւ բուրուառ ոսկի անուշահոտ խնկոցըն ծըխիչ, զգգուիչ անեղին եւ պարծանք կուսութեան սուրբ Աստուածածին Մարիամ, քանզի ի վերայ քու կայծակնատարած եւ շող աստուածութեան երեւիւր, սիւն առ սիւն հատանէր եւ աստղանըման երեւէր, որ այսաւը ի քէն մարմնացաւ . . . :

Փառաւորեալ Աստուածածին բողքոց գարնանային մըշտընջենաւորաճիդ, քանզի հինաւուրց Աստուածն այսաւը յերկրի երեւեցաւ եւ ընդ մարդկան ըրջեցաւ, նոյն ինքն խայտայ այսաւը ի ջուրսըն Յորդանանու եւ ի Կարապետէ ծեռնադրի, Հայր ի վերուստ վըկայէ, դայ է իմ սիրելի որդի ընդ որ հանեցայ, որ այսաւը ի քէն մարմնացաւ . . . :

Աւդ լուսոյ եւ ծառ կենաց հայրենի տնկուած, սընեալ յարարչէն սուրբ Աստուածածին, բարունակ բազմածալիկ եւ թերթ վարդասուն, բաղրամամ ողկոյզ պանձալի պարտէզ, արեւելք արեգականն արդարութեան եւ պարծանք կուսութեան սուրբ Աստուածածին Մարիամ, որ այսաւը ի քէն մարմնացաւ մեզ Աստուած երեւեցաւ, եւ ընդ մարդկան ըրջեցաւ, ըզնա անդադար աղաչեա վասըն հանգուցելոց մերոց, աղաչեմբ :

Եւ եւս առաւել զյորդորումն . . . :

Զանծինս մեր եւ զմիմեանս . . . :

Սոսկալի ծնընդեամբդ ի քէն ցընծան երկինք եւ երկիրս ուրախանան, ամբք նառագայթին եւ արեգակըն հրաշանայ, լուսին նրկարակերտի եւ աստեղք արեգակնանան, եւ մեր հողեղինքըս հրեղինանամբ ընդ հաւը քանին Աստուծոյ, որ այսաւը ի քէն մարմնացաւ սուրբ Աստուածածին Մարիամ: Եւ այժմ ողորմեա . . . :